

ԼԵՎՈՆ ՍՈՒՐԵՆԻ ԻԳԻԹՅԱՆ

Ծնվել է 1939թ. Վրաստանի Լյուբեմբուրգ քաղաքում:

1946թ.-ից բնակվում է Երևանում:

1956թ. ավարտել է Երևանի N 12 միջնակարգ դպրոցը:

1959թ. ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժին: Ուսմանը զուգահեռ աշխատել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում:

1957-58թթ. աշխատել է «Երևանկաբել» գործարանում:

1958-59թթ. աշխատել է «Արմժիլգրաժանարոյեկտ» ինստիտուտում:

1966թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը:

1969-77թթ. եղել է «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետ, խմբի ղեկավար, սեկտորի պետ:

1977-85թթ. եղել է Հայաստանի ճարտարապետների միության պատասխանատու քարտուղարը, համատեղությամբ՝ «Երևաննախագիծ» ինստիտուտում խմբի ղեկավար:

1986-2000թթ. աշխատել է Հայաստանի պետշինում (Ներկայումս ՀՀ քաղաքաշինության նախարարություն) որպես բաժնի վարիչ, վարչության պետ:

2000-2004թթ. եղել է Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության խորհրդի քարտուղար (հասարակական կարգով):

Ներկայումս աշխատում է «Նարեկ Սարգսյան» ճարտարապետական արվեստանոցում: Նախագծել է հասարակական, բնակելի հուշարձանային օբյեկտներ: Վերջին աշխատանքը Վ. Սարոյանի հուշարձանն է Երևանում (քանդակագործ Դավիթ Երևանցու և ճարտարապետ Ռ. Հասրաթյանի հետ):

1974-86թթ. եղել է հանրապետության ստեղծագործող երիտասարդների խորհրդի նախագահ:

1974-2007թթ. եղել է Հայաստանի ճարտարապետների միության վարչության անդամ, իսկ 1979-1991թթ.՝ ԽՍՀՄ ճարտարապետների միության վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

2006-2008թթ. եղել է ճարտարապետության բնագավառում ՀՀ պետական մրցանակների հանձնաժողովի նախագահը:

2009 թվականից Երևան քաղաքի ավագանու անդամ է:

